ՀՀԿ 10-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

22 հուլիսի 2006 թ.

1.	Համագումարի պատվիրակների գրանցում	10:00-11:00
2.	Համագումարի բացում	11:00-11:05
3.	Հաշվիչ հանձնաժողովի և քարտուղարության ընտրություն	11:05-11:15
4.	Համագումարի օրակարգի հաստատում	11:15-11:20
5.	ՀՀԿ նախագահի զեկույցը	11:20-11:40
6.	Ելույթներ	11:40-12:00
7.	ՀՀԿ ծրագրում լրացումներ կատարելու մասին որոշման ընդունում	12:00-12:05
8.	ՀՀԿ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման ընդունում	12:05-12:10
9.	ՀՀԿ խորհրդի անդամների թվի որոշում	12:10-12:15
10.	ՀՀԿ խորհրդի անդամության նոր թեկնածուների առաջադրում	12:15-12:20
11.	Ընդմիջում: ՀՀԿ խորհրդի նոր անդամների ընտրություն	12:20-13:20
12.	Ընտրությունների արդյունքների հրապարակում	13:20-13:25
13.	Ընդմիջում: ՀՀԿ խորհրդի նիստ	13:25-14:00
14.	ՀՀԿ նախագահի ելույթը	14:00-14:10
15.	Ելույթներ	14:10-14:20
16.	Համագումարի փակում	14:20-14:30

ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 10-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սիրելի պատվիրակներ, հարգարժան հյուրեր.

Թույլ տվեք ողջունել Ձեզ կուսակցության 10-րդ արտահերթ համագումարի աշխատանքների բացման առթիվ, հույս հայտնել, որ այն էլ ավելի կխթանի մեր համատեղ կուսակցական քաղաքական գործունեությանը՝ ի շահ և ի բարօրություն մեր երկրի ու ժողովրդի:

Մեկ ամիս առաջ, երբ կուսակցության խորհուրդը հրապարակեց արտահերթ համագումար հրավիրելու իր որոշումը, այն դարձավ հասարակական-քաղաքական ամենալայն քննարկումների առիթ, ինչը, միգուցե, բնական է մեր երկրի քաղաքական կյանքում մեր կուսակցության դերակատարության պարագայում: Սակայն կյանքը և այս համագումարը եկան ապացուցելու, որ տարատեսակ գուշակությունները, որ հաճախ փորձ է արվում ներկայացնել որպես «վերլուծություններ», սին էին:

Բազմիցս ունեցել ենք առիթներ նշելու, որ 10-րդ արտահերթ համագումար հրավիրելու որոշումը պայմանավորված է երկու հիմնական գործոններով: Առաջինը՝ կապված է կուսակցության ծրագրի հետ, որի դրույթներում լրացումների միջոցով հստակեցումներ մտցնելու անհրաժեշտությունը և դրանց ձևակերպումները քննարկվել ու մշակումների է ենթարկվել դեռևս նախորդ տարվանից, սակայն այն չէր ստացել իր վերջնական տեսքը՝ 9-րդ հերթական համագումարին ներկայացնելու համար: Վերջին ամիսների ընթացքում շարունակվել են քննարկումները կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումներում, և ստացված առաջարկությունների արդյունքնում ձևավորվել է մի փաստաթուղթ, որն ունի հետևյալ նպատակները.

<u>1-ին</u>. ՀՀԿ ծրագրի մի շարք հիմնադրույթների շարադրանքն ավելի ընկալելի դարձնել մեր հասարակության լայն հատվածների համար: Այս առումով որոշ ծրագրային կետեր ավելի բացված են ներկայացված:

<u>2-րդ.</u> Կուսակցության ծրագրային հիմնադրույթներն ավելի համահունչ դարձնել այսօր աշխարհում ընդունված գաղափարախոսական ուղղություններին, տվյալ դեպքում՝ դասական պահպանողականությանը, քանզի վերջինիս հիմքում ընկած մի շարք առանցքային հասկացություններ մեզ համար սկզբունքորեն ընդունելի են: Օրինակ, Աստված, ազգ, հայրենիք, ավանդական ընտանիք, բարոյական նորմերի հաստատուն համակարգ, ազատական տնտեսություն և այլն: Ըստ այդմ, մենք ծրագրում ամրագրում ենք, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ազգային պահպանողական կուսակցություն է:

<u>3-րդ.</u> Հանրապետության գաղափարական-քաղաքական դաշտում հստակեցնել և առանձնացնել կուսակցության գործունեության ծրագրային և նպատակային խնդիրները, ամրագրել դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև գաղափարական հենքի վրա

հնարավոր համագործակցությունների շփման եզրեր ապահովել ներքին և արտաքին հարաբերությունների մակարդակներում:

Նշեմ, որ առաջարկվող լրացումները որևէ կերպ չեն անդրադառնում ծրագրի գաղափարական բովանդակության վրա: Մեր ծրագրային հիմնադրույթներում, գաղափարախոսական ուղղվածության առումով ոչինչ չի փոխվում:

Համագումարի իրավասության ենթակա հաջորդ խնդիրը պայմանավորված է կուսակցության խորհրդի կողմից կուսակցության կանոնադրության մեջ լրացում կատարելու առաջարկով, ըստ որի, ի պաշտոնե կուսակցության խորհրդի կազմում ընդգրկվում են նաև Երևան քաղաքի տարածքային կազմակերպությունների և կուսակցության կենտրոնական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Այս անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ կուսակցության ղեկավար մարմնում ընդլայնվում է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ներկայացվածությունը:

Ընդլայնված խորհրդի աշխատանքների համակարգման նպատակով կանոնադրությամբ վերականգնվում է կուսակցության խորհրդի նախագահի կարգավիճակը:

Բավարար հնարավորություն է ընձեռվում որոշումների կայացման գործընթացին մասնակցելու առումով:

Լայն հնարավորություններ են ստեղծվում ներկուսակցական դեմոկրատական մեխանիզմների գործարկման, ուղղահայաց կառավարման համակարգում առավել լայն կուսակցական շրջանակների կարծիքների և դիրքորոշումների քննարկման համար:

Զանգվածային կուսակցություններին բնորոշ քաղաքական և գործառնական խնդիրների իրականացման արդյունավետության նպատակով մեր կուսակցության խորհրդում և նրա ընդլայնման մեխանիզմներով ներկայացվում են հանրապետության քաղաքական, սոցիալական, տնտեսական, հասարակական ոլորտների, օրենսդիր, գործադիր, տեղական ինքնակառավարման մարմիններում գործող հայտնի անձիք, անկախության ձեռքբերման և պետականության կայացման գործում զգալի ներդրում ունեցող գործիչներ: Այս ընթացքում կուսակցությանն անդամակցել են բազմաթիվ մարդիկ, որոնց հետ մենք ճանապարհ ենք անցել, ովքեր տարբեր խնդիրներում սատար են կանգնել կուսակցության դիրքորոշումներին և անհրաժեշտ է նրանց կարողությունները լիարժեքորեն ի նպաստ դնել կուսակցության հետագա աշխատանքներում: Վստահ եմ, որ առաջիկայում հնարավորություն կունենանք համատեղ և միավորված ջանքերով էլ ավելի բարձրացնել կուսակցական գործունեության ակտիվությունն ու արդյունավետությունը:

Սա հաստատումն է նաև մեր այն սկզբունքային մոտեցման, որ մեր երկրի բազմակուսակցական համակարգը լիարժեք կայացման համար կարիք ունի ուժերի համախմբման:

Սիրելի պատվիրակներ.

2005թ. դեկտեմբերին տեղի ունեցած հերթական 9-րդ համագումարից հետո ընկած ժամանակահատվածում կուսակցության գործունեությունը կարելի է բաժանել մի քանի հիմնական ուղղությունների՝ համագումարի որոշումների իրականացում, ներքաղաքական վերադասավորումներ և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթաց: Անդրադառնալով 9-րդ համագումարի որոշումներին՝ նշեմ, որ դրանց կատարման ընթացքը նախորդ յոթ ամիսների համար պետք է գնահատել բավարար: Որոշումների կատարման նպատակով՝

- շարունակվել է կուսակցության անդամների վերահաշվառման և նոր անդամների անդամագրումը. այսօր ՀՀԿ-ն ունի շուրջ 30000 անդամներ, 61 տարածքային կազմակերպություններ, որոնց գործունեությունը համակարգվում է 10 մարզային խորհուրդներում, 800-ից ավելի սկզբնական կազմակերպություններում:
- Մեթոդական և կազմակերպական նոր որակներ են ստացել գաղափարական աշխատանքների իրականացումը՝ գրականության և տարբեր տպագիր նյութերի հրապարակման, սեմինար քննարկումների, կլոր սեղանների, տարածքային կազմակերպություններում հասարակության տարբեր հատվածների հետ պարբերաբար հանդիպումների միջոցով: Ծրագրվում և իրականացվում են ազգային արժեքային համակարգի պահպանման ու ամրապնդմանն ուղղված տեղեկատվական-քարոզչական աշխատանքներ, հասարակության տարբեր խավերի և հատվածների համար կազմակերպվում են գիտա-կրթական, հոգևոր-մշակութային, ինչպես նաև մարզական միջոցառումներ: Այս տարի լրանում է Գարեգին Նժդեհի ծննդյան 120 ամյակը, և այդ կապակցությամբ հրատարակվել է Նժդեհի նոր «Հատընտիրը», որում տեղ են գտել նրա գրքերն ու գրքույկները, գաղափարախոսական բնույթի հոդվածները, նամակները, գրությունները, ճառերը: Ուսանողների և ասպիրանտների շրջանում անցկացվել է մրցույթ՝ «Գարեգին Նժդեհի ուսմունքը և արդիականություն» թեմայով, որի արդյունքները վկայում են, որ Նժդեհի ուսմունքն այսօրվա սերունդի կողմից արժևորվում է:
- Մեծ ուշադրություն է դարձվել կուսակցության տարածքային կազմակերպությունների գրասենյակներին տեխնիկայով և անհրաժեշտ գույքով ապահովելու աշխատանքներին:
- Շարունակվում են տարածքներում կուսակցության նոր գրասենյակներ բացելու և ստորաբաժանումներ ձևավորելու աշխատանքները. Երևան քաղաքում և հանրապետության տարբեր բնակավայրերում, սկզբնական կազմակերպությունների համար բացվել և գործում են 200-ից ավելի գրասենյակներ: Հետհամագումարյան շրջանում տեղի են ունեցել մարզային և տարածքային կազմակերպությունների խորհուրդների ընտրություններ, որոնց ընթացքում տարբեր ստորաբաժանումների ղեկավար կազմում ընտրվել են կուսակցության ակտիվի նոր անդամներ: Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներն իրենց պարբերական և ավանդական միջոցառումներով սերտորեն համագործակցում են մեր համակիրների և հասարակության տարբեր հատվածների հետ: Ակտիվ գործունեություն են ծավալում

երիտասարդական, կանանց և մարզական կազմակերպությունները: Կուսակցական կառույցներն անմասն չեն մնացել նաև սոցիալապես խոցելի և անապահով խավերի տարբեր հիմնախնդիրներին աջակցելու գործից:

- Խնդիր էր դրվել իրավա-քաղաքական բոլոր ուղղություններով ակտիվացնել ԱԺ-ում մեր կուսակցության խմբակցության աշխատանքները:

Այս գործընթացները կշարունակվեն մինչև 2007թ. գարնանը կայանալիք ԱԺ ընտրությունները:

Հարգելի մասնակիցներ, նախորդ համագումարի մեր հաշվետու ելույթներում մենք մանրամասն անդրադարձել ենք գործադիր, օրենսդիր և տարածքային կառավարման խնդիրներին ու ձեռքբերումներին: Այսօր դրանք ևս կրում են շարունակական բնույթ, իսկ տնտեսության, հանրային և պետական ոլորտներում արձանագրվող դրական տեղաշարժերի գլխավոր հիմքը շարունակում է մնալ նախագահ-կառավարություն-ԱԺ համագործակցությունը, որտեղ մեզ համար կուսակցական խնդիրները երբեք վեր չեն դասվել ազգային-պետական խնդիրներից: Չեմ ցանկանում թվեր ու փաստեր վկայակոչել դրականը հիմնավորելու համար, քանզի դրանք տարբեր առիթներով ներկայացվել են մեր հասարակությանը: Մեզ համար այսօր անչափ կարևոր է եղած ձեռքբերումները պահպանելն ու ծրագրերը կիսատ չթողնելը: Իմ ամենամեծ ցանկություններից մեկն այն է, որ Հայաստանում ոչ մի կառավարություն այլևս չմտածի նախորդից ստացած ծանր ժառանգության մասին, այլ մեր պետականության ամրացող պատին ևս մի քար ավելացնի, որը ոչ միայն այդ կառավարությանն է անհրաժեշտ, այլ ամբողջ հասարակությանն ու պետությանը: Այսօր մենք կարողացել ենք ապահովել կառավարության գործունեության և կառավարման արդյունավետության առաջնային հիմքերը: Գործնականում ապավինելով կատարվող աշխատանքներին՝ մենք միշտ բարձրաձայնել ենք, որ պետության և հասարակության կյանքում կան խնդիրներ, որոնք վեր են կուսակցական և խմբային շահերից: Ըստ այդմ՝ պետության կողմից իրականացվող խնդիրները, կախված դրանց առաջնայնությունից, կարող են փոխվել զարգացման տարբեր փուլերում, իսկ գործունեությունը պետք է հիմնված լինի ազգային, զարգացման ծրագրերի, անվտանգության հայեցակարգերի վրա, որոնք պետք է հստակ սահմանեն այդ գործունեության նպատակներն ու դրանց հասնելու միջոցները:

Բոլորիս քաջ հայտնի է, որ տեղի ունեցած քաղաքական վերադասավորումների արդյունքում փոփոխվեց նաև 2003թ. ձևավորված կոալիցիոն ձևաչափը, իր հետ բերելով նոր, առավել ընդլայնված քաղաքական համաձայնություն, Հայաստանի Հանրապետական կուսակցության, Հայ Հեղափոխական Դաշնակցության, Միավորված աշխատանքային կուսակցության, ԱԺ «Ժողպատգամավոր» և «Գործարար» խմբերի մասնակցությամբ: Նպատակը մեկն էր՝ պահպանել և շարունակել համակարգային բարեփոխումներին և սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված այն ծրագրերն ու աշխատանքները, որոնք 2003թ. նախագահական և խորհրդարանական ընտրություններում ստացել էին մեր ժողովրդի հավաքական մեծամասնության վստահությունը՝ դառնալով կառավարության գործունեության

հիմնական ուղենիշ: Մեր կուսակցության կողմից առաջարկված ծրագրերը եղել են հստակ և նպատակային՝ ուղղված հասարակության լայն զանգվածների սոցիալ-տնտեսական, հոգևոր մշակութային պահանջմունքների բավարարմանը: Մենք վստահ ենք, որ մեր գործունեության բազմաբնույթ դրսևորումների առանցքում ընկած է երկրի տնտեսության զարգացումը, որի արդյունքում պետք է ապահովվի մեր օրերի թերևս կարևորագույն գաղափարը, այն է՝ ապահովել հայ մարդու, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքն ու կենցաղը: Որպես գաղափարական կուսակցություն, պարտավոր ենք գործել՝ ելակետ ունենալով մարդկային և ազգային արժանապատվության գիտակցումը:

Չնայած այն հանգամանքին, որ երկրում և քաղաքական դաշտում աստիճանաբար կարծես սկիզբ են առնում նախընտրական տրամադրությունները, այնուամենայնիվ, այսօր քաղաքական դաշտում գործում է ավելի լայն համագործակցություն, ինչի արդյունքում պահպանվում է կառավարության և Ազգային ժողովի բնականոն գործունեությունը: ԱԺ-ի «Հանրապետական» խմբակցությունը շարունակում է հավատարիմ մնալ իր քաղաքական գծին՝ ձեռքբերված քաղաքական համաձայնությունների շրջանակներում սատարելով կառավարության գործունեությանը և նախատեսված սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացմանը: Առաջնորդվելով հավասարակշռված և նպատակային քաղաքականությամբ՝ մեր խմբակցությունը երկրի օրենսդիր մարմնում ստեղծում է կայուն զարգացման, տնտեսական բարեփոխումների, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմանն ուղղված աշխատանքների օրենսդրական հիմքը:

Մեր պետության ու հասարակության համար առաջնային կարևորագույն խնդիր է մնում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը: Հանրապետական կուսակցությունը բազմիցս առիթ է ունեցել հանրությանը ներկայացնելու իր մոտեցումները Արցախյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ:

Այն է՝

1. Պետք է միջազգայնորեն ճանաչվի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը
2. ԼՂՀ-ն չպետք է լինի Ադրբեջանի ենթակայության ներքո
3. Պետք է ապահովվի ԼՂՀ-ի բնակչության և սահմանների անվտանգությունը
4. ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման
5. ԼՂՀ հարցի կարգավորումը չպետք է տեղի ունենա ՀՀ սահմանների փոփոխման հաշվին
6. Հարցի խաղաղ կարգավորման գործընթացում ԼՂՀ-ն պետք է հանդես գա որպես բանակցային կողմ:

Բանակցային գործընթացը շարունակվում է և վերջին շրջանում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջարկել են մի փաթեթ, որը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հարակից որոշ շրջաններից հայկական ուժերի դուրսբերում, խաղաղապահ ուժերի տեղակայում, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացում: Որպես բանակցությունները շարունակելու հիմք՝ այս մոտեցումները, թերևս,

ընդունելի լինեին, եթե Ադրբեջանը տարբեր առիթներով չմերժեր դրանք, ռազմատենչ հայտարարություններով և ռազմական բյուջեի աննախադեպ աճով չփորձեր ճնշում գործադրել՝ հույս ունենալով, որ խնդիրը կարող է լուծել ուժայի եղանակով: Արդեն 12 տարի է հակամարտության գոտում պահպանվում է զինադադարը, և մենք ողջունում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը: Հուսով ենք, որ նրանց աշխատանքները դրականորեն կանդրադառնան տարածաշրջանում խաղաղության ամրապնդման վրա: Իսկ լուծումները պետք է լինեն այնպիսին, որ մեր հասարակության համար լինեն ընդունելի:

Մենք հայտարարել ենք, որ պատրաստ ենք մեր ազգային և պետական շահերից ելնելով համագործակցել ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ պետությունների հետ՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ ռազմական ոլորտներում: Մենք գտնում ենք, որ պետությունը վարում է հավասարակշռված քաղաքականություն՝ իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները համարելով եվրոպական ինտեգրացիան և ԱՊՀ շրջանակներում հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև խորացնելով երկկողմ միջպետական հարաբերությունները: Անհրաժեշտ է գիտակցել, որ հարաբերությունները պետք է լինեն հավասարության, յուրաքանչյուրիս շահերը պաշտպանելու սկզբունքի վրա:

Սիրելի կուսակիցներ, հարգելի հյուրեր.

Քաղաքական պայքարում ձեռքբերումները ծանր ու դժվարին աշխատանքի արդյունք են, և միայն հետևողականությունն ու նպատակային գործունեությունն է, որ մեզ հնարավորություն է տալու ներկայանալ որպես կայացած քաղաքական ուժ: Համագումարից հետո մենք շարունակելու ենք 9-րդ համագումարի որոշումների լիարժեք և նպատակային իրականացման աշխատանքները: Ներգրավված լինելով հասարակական-քաղաքական ամենատարբեր ոլորտներում՝ շարունակելու ենք մեր ծրագրերի ու նպատակների շրջանակներում ակտիվորեն մասնակցել հանրապետության ներքաղաքական կյանքին: Կրելով այսօրվա կառավարության պատասխանատվությունն ու օրենսդիր մարմնում ունեցած մեծամասնական քաղաքական ազդեցությունը՝ մենք շարունակելու ենք պայքարել հանուն կայուն զարգացման, հանուն ձեռքբերումների ավելացման, հանուն սոցիալ-տնտեսական զարգացման ու մեր քաղաքացիների արժանապատիվ կյանքի, հանուն ազգային արժեքների պահպանման ու արդիականացման, հանուն ժողովրդավարական սկզբունքների կայացման ու ամրապնդման՝ ի նպաստ դնելով մեր կուսակցական ողջ ներուժն ու քաղաքական փորձը: Համոզված եմ, որ հետագա պայքարի համար մենք էլ ավելի համախմբված ենք լինելու մեր գաղափարների շուրջ: Դա մեզ հնարավորություն է տալու ժողովրդավարական ուղիով առաջ շարժվող մեր երկրում արձանագրել որակական նոր առաջընթաց՝ սերունդների համար ապահովելով ամուր ու կայուն զարգացող երկիր ունենալու և արժանապատվորեն նրա վաղվա օրը կառուցելու հստակ երաշխիքները:

Շնորհակալություն

ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 10-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սիրելի հայրենակիցներ, հարգելի հյուրեր.

Ուզում եմ ողջունել բոլոր ընկերներին, որոնք վերջին շրջանում են անդամագրվել մեր կուսակցությանը: Վստահ եմ, որ մեզ միավորում են այն գաղափարները, որոնք շարադրված են մեր ծրագրում, այն գաղափարները, որոնցով մենք առաջնորդվել ենք տարիներ շարունակ և որոնց հավատարիմ ենք մնացել այս ամբողջ ժամանակաշրջանում:

Հարգելի պատվիրակներ, ես մի քանի հարցադրումների կանդրադառնամ, որոնցից առաջինը հենց մեր շարքերի ստվարացումն է, որի վերաբերյալ տարբեր հարցադրումներ էին հնչում, տարբեր գուշակություններ արվում: Վստահ եմ, որ այս գործընթացում պետք է դիտարկել երկու հանգամանք՝ հաշվի առնելով՝

1. սահմանադրական փոփոխությունների արդեն զգացվող ազդեցությունը մեր քաղաքական կյանքում,
2. այն անհրաժեշտ գործընթացը, որի մասին միշտ խոսվել է մեր հասարակության մեջ, բայց որի ուղղությամբ շատ քայլեր չէ, որ այս տարիների ընթացքում արվել է:

Խոսքը վերաբերում է բազմակուսակցական քաղաքական համակարգի համախմբմանը, կուսակցությունների համախմբմանը: Գաղտնիք չէ, որ շատ հաճախ են հնչել դժգոհություններ՝ 70 և ավելի կուսակցությունների առկայության հետ կապված և, բնական է, որ կուսակցությունների ավելի զորացումը միայն օգտակար է բազմակուսակցական համակարգի լիարժեք կայացման համար:

Ի դեպ, սա մի գործընթաց է, որ ՀՀԿ-ն անցել է ևս մեկ անգամ 1998թ-ին: Ուզում եմ հիշեցնել, որ այն ժամանակ էլ տարատեսակ գուշակություններ էին հնչում, բայց կյանքը ցույց տվեց, որ այդ գործընթացը միայն ամրապնդեց կուսակցությանը, մեզ էլ ավելի զորավոր դարձրեց և էլ ավելի մեծ հնարավորություններ տվեց, որպեսզի մենք կարողանանք իրականություն դարձնել մեր գաղափարախոսության մեջ ներկայացված հիմնադրույթները և մեր ծրագրերը: Վստահ եմ, որ այս անգամ նույնպես մենք անպայման մեր հզորացումը օգտագործելու ենք այդ ուղղությամբ:

Իհարկե, ինչպես ցանկացած կուսակցության կյանքում, միշտ էլ հատկապես մեծ գործընթացները, մեծ հոսք ունեցող գործընթացները ունենում են մարտահրավերներ: Չի կարող որևէ գործընթաց լինի առանց մարտահրավերների: Բայց ես վստահ եմ, որ ինչպես մինչ այժմ մենք հաղթահարել ենք մեզ նետված բոլոր մարտահրավերները, այս գործընթացը, որը մեր շարքեր է բերում հայտնի մարդկանց, բերում է հազարավոր մարդկանց, այս գործընթացը ևս գնալու է նույն հունով և ծառայելու է մեր ընդհանուր նպատակների իրագործմանը: Եվ նրանք, ովքեր փորձում են կուսակցության մեջ ինչ-որ թևեր, պոչեր և կուսակցությունների համար անահարիր ինչ-որ մասեր հայտնաբերել, չարաչար սխալվում են. նման բան ՀՀԿ-ի մեջ չկա, չի եղել և չի լինելու:

ՀՀԿ-ն բացի իր գաղափարախոսությունից, ունի ևս մի առանձնահատկություն, դա համախմբվածությունն է և ընդհանուր նպատակին նվիրվածությունը:

Վստահ եմ, որ մեր նոր ընկերների հետ մենք հավատարիմ ենք լինելու մեր նպատակներին և սկզբունքներին:

Մենք տարիներ շարունակ շատ արդյունավետ աշխատել ենք և վստահ եմ, որ դեռ շատ երկար տասնամյակներ ընդհանուր ճանապարհ ունենք միասին անցնելու առաջիկայում:

Եւս մեկ անգամ ողջունելով մեր նոր անդամագրված ընկերներին՝ ուզում եմ վստահություն հայտնել, որ այո՛, մենք շարունակելու ենք հավատարիմ մնալ մեր գաղափարներին, մեր ընդհանուր նպատակներին:

Վստահ եմ նաև, որ եթե այն ողբերգությունները տեղի չունենային, այսօր մենք գնալու էինք նույն ճանապարհով, եթե մեր շարքերում լինեին կուսակցության հիմնադիր Ա. Նավասարդյանը, Վ. Սարգսյանը: Այնպես որ, կուսակցությունն ամուր է, հաստատակամ է: Նոր հզորությունները նոր հեռանկարներ և պարտավորություններ են բերում կուսակցությանը, և ես վստահ եմ, որ այն ավանդույթները, որ մենք մեկուկես տասնամյակում ունեցել ենք, շարունակելու ենք դեռ շատ տասնամյակներ:

Շնորհակալություն

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 10-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հարգելի Հանրապետականներ

Մեր համագործակցությունը իրոք երկար ճանապարհ է անցել, եւ չնայած բազմաթիվ սադրիչների համառ ջանքերին՝ մենք կարողացանք տարբերակել գլխավորը երկրորդականից, կարողացանք վեր կանգնել մանր-մունր անձնական հարցերից եւ հաջողությամբ լուծել այն խնդիրները, որ ինքներս դրել էինք մեր առջեւ: Սակայն մեր պետության եւ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերները ավելին են պահանջում: Համագործակցությունը լավ բան է, բայց մենք պարտավոր ենք միավորվել: Հանրապետության առողջ եւ կարող ուժերը պարտավոր են համախմբվել, եւ ես համարում եմ, որ այս համագումարով մենք սկիզբ ենք դնում այդ գործընթացին: Կախված նրանից, մենք հաջողելու ենք, թե ոչ, կարծում եմ, կարող ենք նոր ոգի հաղորդել այդ գաղափարին, կամ էլ այն վարկաբեկել: Մենք ունենք կուսակցականների համոզված շարքեր, մենք ունենք համակիրների հզոր բանակ, մենք ունենք քաղաքական կամք եւ նպատակասլացություն մեր երկիրն առաջ մղելու զարգացման նոր աստիճանի: Ես վստահ եմ, որ այս խնդիրը մենք հաջողությամբ ենք կատարելու: Համենայն դեպս, ես ամեն ինչ անելու եմ, որ այս պայքարում եւս մենք հաղթող լինենք:

Շնորհակալ եմ վստահության համար:

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետական կուսակցության 10-րդ արտահերթ համագումարի արձանագրությունից

ք. Երևան 22 հուլիսի 2006թ.

ՀՀԿ համագումարի նախագահության կազմում էին՝
ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարյանը
ՀՀԿ նախագահի տեղակալներ Ռազմիկ Զոհրաբյանը
Տիգրան Թորոսյանը:
Համագումարը նախագահում էր ՀՀԿ նախագահի տեղակալ Տ. Թորոսյանը:

ՀՀԿ 10-րդ արտահերթ համագումարի աշխատանքին մասնակցելու համար ՀՀ բոլոր մարզերից և Երևան քաղաքից ընտրված 770 պատվիրակից ներկա էին 723-ը:
Ձեկույցով հանդես եկավ ՀՀԿ նախագահ Ա. Մարգարյանը:
Նախագահողը հայտարարեց, որ 2006թ. հուլիսի 19-ի ՀՀԿ խորհրդի նիստում հաստատվել է ՀՀԿ ծրագրում լրացումներ կատարելու մասին որոշումը: Նա առաջարկեց քվեարկությամբ հաստատել ՀՀԿ ծրագրում լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը:
Այլ առաջարկներ չեղան և ՀՀԿ ծրագրում լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը հաստատվեց միաձայն: Նախագահողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել ՀՀԿ կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների մասին որոշման նախագիծը: Այլ առաջարկներ չեղան և ՀՀԿ կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների մասին որոշման նախագիծը հաստատվեց միաձայն:
Տ. Թորոսյանը նշեց, որ համաձայն ՀՀԿ կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների՝ կուսակցության խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են՝
Երևան քաղաքի տարածքային կազմակերպությունների նախագահները

1. Ռուբեն Ալֆրեդի Սադոյան --/ Կենտրոնի տ/կ /
2. Արման Գալուստի Սահակյան --/Աջափնյակի տ/կ /
3. Հովհաննես Երջանիկի Շահինյան --/ Արաբկիրի տ/կ /
4. Տարոն Անդրանիկի Մարգարյան --/Ավանի տ/կ /
5 Արայիկ Յուրջանի Քոթանջյան --/ Ձեյթունի տ/կ/
6. Սուրեն Ալբերտի Ղուկասյան --/Դավթաշենի տ/ կ /
7 Կորյուն Լուկաշի Աթոյան --/Նոր-Նորքի տ/կ /
8 Արտաշես Կարապետի Գաբրիելյան --/Էրեբունու տ/կ /
9. Վարազդատ Վաղինակ Մկրտչյան -- /Նորք- Մարաշի տ/կ /

ինչպես նաև կուսակցության ստորաբաժանումների ղեկավարները՝

1. Հերմինե Միքայելի Նաղդալյան --/ ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ/
2. Ռազմիկ Անուշավանի Ստեփանյան --/ՀՀԿ մարզական խորհրդի նախագահ/

Հաշվի առնելով կանոնադրական վերահիշյալ փոփոխությունները և լրացումները՝ առաջարկվեց կուսակցության խորհրդի կազմում ընտրել ևս 15 անդամ:
Նախագահողը, ներկայացրեց այն սկզբունքները, որոնցից ելնելով ՀՀԿ խորհուրդը հաստատել է ՀՀԿ խորհրդի անդամության նոր թեկնածուների կազմը՝

1. Սարգսյան Սերժ Ազատի
2. Խաչատրյան Վարդան Ժորայի
3. Ձախարյան Երվանդ Վազգենի
4. Կիրակոսյան Կարինե Գեղամի
5. Կարապետյան Կարեն Սարգսի

6. Հայրապետյան Ռուբեն Ռաֆիկի
7. Ալեքսանյան Լեռնիկ Ռաֆիկի
8. Փամբուկյան Հարություն Կարոյի
9. Մխիթարյան Արմեն Աշոտի
10. Սարգսյան Լևոն Հրաչյայի
11. Հարությունյան Համլետ Միքայելի
12. Հակոբյան Հակոբ Ռաֆիկի
13. Միքայելյան Սասուն Մեխակի
14. Բեգլարյան Գագիկ Բեգլարի
15. Սեդրակյան Միեր Դավիթի

և այն ներկայացրեց համագումարի հաստատմանը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքում ընտրվեց հետևյալ կազմը՝

1.Սարգսյան Սերժ Ազատի	--712 ձայն
2.Խաչատրյան Վարդան Ժորայի	--708 ձայն
3.Զախարյան Երվանդ Վազգենի	--710 ձայն
4.Կիրակոսյան Կարինե Գեղամի	--710 ձայն
5.Կարապետյան Կարեն Սարգսի	--708 ձայն
6.Հայրապետյան Ռուբեն Ռաֆիկի	--709 ձայն
7.Ալեքսանյան Լեռնիկ Ռաֆիկի	--709 ձայն
8.Փամբուկյան Հարություն Կարոյի	--709 ձայն
9.Մխիթարյան Արմեն Աշոտի	--708 ձայն
10.Սարգսյան Լևոն Հրաչյայի	--708 ձայն
11.Հարությունյան Համլետ Միքայելի	--709 ձայն
12.Հակոբյան Հակոբ Ռաֆիկի	--708 ձայն
13.Միքայելյան Սասուն Մեխակի	--708 ձայն
14.Բեգլարյան Գագիկ Բեգլարի	--709 ձայն
15.Սեդրակյան Միեր Դավիթի	--709 ձայն

Այսպիսով՝ ՀՀԿ ընդլայնված խորհրդի թվակազմը դարձավ 70 (42+13+15):

Ինչպես իր զեկույցում նշեց Ա.Մարգարյանը, ընդլայնված խորհրդի աշխատանքների համակարգման նպատակով կանոնադրությամբ վերականգնված է կուսակցության խորհրդի նախագահի կարգավիճակը: Նաև երկու նոր հանձնաժողովներ՝ տնտեսագիտական և գործարարությանն աջակցող, ձևավորելու անհրաժեշտություն է առաջացել:

Հայտարարվեց կարճատև ընդմիջում, որի ընթացքում տեղի ունեցավ ՀՀԿ համալրված խորհրդի 1-ին նիստը: Նիստում քննարկվեց.

1. ՀՀԿ խորհրդի նախագահի առաջադրման և ընտրության հարցը,
2. ՀՀԿ երկու նոր հանձնաժողովների նախագահների ընտրության հարցը:

Խորհրդի նիստի արդյունքները ներկայացրեց ՀՀԿ նախագահ Ա.Մարգարյանը:
Նա հայտնեց, որ խորհրդի նիստում որպես ՀՀԿ խորհրդի նախագահ և փոխնախագահ, իր կողմից առաջադրվել է Սերժ Սարգսյանի թեկնածությունը, և խորհուրդը միաձայն պրն Սարգսյանին ընտրել է ՀՀԿ խորհրդի նախագահ:

Ա.Մարգարյանը հայտնեց, որ խորհուրդը տնտեսագիտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրել է իր կողմից առաջադրված թեկնածու Կարեն Կարապետյանին, գործարարությանն աջակցող հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվել է Հ.Փամբուկյանը:

Ա.Մարգարյանն ասաց, որ համաձայն կանոնադրության, ՀՀԿ նախագահը ձևավորում է գործադիր մարմին, որը բաղկացած է կուսակցության խորհրդի նախագահից, կուսակցության նախագահի տեղակալներից, հանձնաժողովների նախագահներից և ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավարից: